ՍԱՂՄՈՍ 33

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Փառք Արարչին և Պահապանին <u>MT ներածություն չկա</u>	ՏԻՐՈՋ գերազան-ցությունը Ստեղծա-գործության և պատ-մության մեջ	Օրհներգ Աստծուն որպես Արարիչ և Պատմության Տեր	Փառաբանության երգ	Օրհներգ նախա-խնամության
33:1-5	33:1-3	33:1-3	33:1-3	33:1-3
	33:4-5	33:4-5	33:4-5	33:4-5
33:6-12	33:6-7	33:6-7	33:6-7	33:6-7
	33:8-9	33:8-9	33:8-9	33:8-9
	33:10-12	33:10-12	33:10-12	33:10-12
33:13-17	33:13-15	33:13-17	33:13-15	33:13-15
	33:16-17		33:16-17	33:16-17
33:18-22	33:18-19	33:18-19	33:18-19	33:18-19
	33:20-22	33:20-22	33:20-22	33:20-22

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. NASB Սերտողության Աստվածաշունչը (էջ՝ 770) առաջարկում է այս Սաղմոսը որպես պատարագի մի մաս:
1. Ղևտական երգչախումբ
   ա. առաջնորդ, Սաղմ. 33:1-3
   բ. երգչախումբ, Սաղմ. 33:4-49

2. հավաքված երկրպագուների արձագանքը, Սաղմ. 33:20

Բ. Այն չունի MT ներածական վերնագիր (ինչպես Սաղմոս 1, 2, 10), սակայն «նոր երգը»՝ Սաղմ. 33:3-ում ակնարկում է մի քանի պատմական կարևոր դեպքեր: Սաղմ. 33:16-17-ի պատճառով հավանաբար այն վերաբերում է ռազմական հաղթանակի:

Գ. Ես զգացված եմ ՅԱՀՎԵԻ տիեզերական մասշտաբի նպատակներով, որ բովանդակում է ամբողջ մարդկությանը (այսինքն՝ տես «բոլոր» բառի գործածությունը Սաղմ. 33:8, 13-15-ում): Նկատե՛ք, Սաղմ. 33:5բ-ի ապշեցնող հայտարարությունը: Տես ամբողջական ցուցակը այն տեքստերի, որոնք ցույց են տալիս հենց սկզբից հեթանոսների ներգրավումը ուխտի մեջ ՅԱՀՎԵԻ վերջնական նպատակի համար՝ Սաղմ. 33:10-12 գրառումներում:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 33:1-5
[1]ՏԻՐՈՋՈՎ ցնծացե՛ք, ո՛վ արդարներ,
Քանզի ուղիղներին վայելում է օրհնությունը:
[2]Փառաբանեցե՛ք ՏԻՐՈՋԸ քնարով.
Նրան սաղմո՛ս երգեցեք քնարով ու տասլարանի տավղով:
[3]Նոր ե՛րգ երգեցեք Նրա համար,
Հմտորեն նվագեցեք՝ ցնծության բարձր աղաղակներով,
[4]Քանի որ ՏԻՐՈՋ խոսքը ճշմարիտ է
Ու Նրա բոլոր գործերը ճշմարտությամբ են կատարված:
[5]Նա սիրում է արդարությունն ու իրավունքը:
Երկիրը լեցուն է ՏԻՐՈՋ գթասիրությամբ:

33:1-5 Առաջին երեք համարները ձևավորում են Սաղմոսի տրամադրությունը Աստծուն փառաբանելու (այսինքն՝ հինգ համազոր ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ):

1. ցնծացե՛ք Տիրոջով – BDB 943, KB 1247, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (այս նույն ԲԱՅՈՎ ավարտվում է Սաղմոս 32-ը)
2. փառաբանեցե՛ք – BDB 392, KB 389, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. սաղմո՛ս երգեցեք Նրան – BDB 274, KB 273, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. երգեցե՛ք Նրան – BDB 1010, KB 1479, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
5. հմտորեն նվագեցե՛ք (BDB 618, KB 668, *Piel* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ) ցնծության բարձր աղաղակներով – BDB 405, KB 408, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Սաղմոս 33:4 և 5 փառաբանության պատճառներն է տալիս՝

1. ՅԱՀՎԵԻ խոսքը (BDB 182) ճշմարիտ է (BDB 449)
2. Նրա բոլոր գործերը հավատարմությամբ են արված (BDB 53, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼ, ՎՍՏԱՀԵԼ, ՀԱՎԱՏՔ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԿ-ՈՒՄ</u>)
3. Նա սիրում է արդարությունը (BDB 842, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԱՏԱՎՈՐ, ԴԱՏԱՍՏԱՆ և ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ</u>)
4. երկիրը լեցուն է ՅԱՀՎԵԻ գթասիրությամբ (BDB 338, տես՝ Սաղմ. 119:64, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԳԹԱՍԻՐՏՈՒԹՅՈՒՆ (*HESED*)</u>)

Խաղաղության և ապահովության առանցքը հանդիսանում է հավատարիմ հետևորդի հավատքը և վստահությունը անփոփոխ, ողորմած, գթառատ ուխտ կապող Աստծո բնավորության վրա (տես՝ Սաղմ. 102:27, Մաղ. 3:6, Եբր. 13:8): Աստվածաշնչի գլխավոր կերպարը Աստված է: Դա Նրա պատմությունն է: Դա Նր ծրագիրն ու խոստումն է:

33:2 Այստեղ նշվում են երկու լարային գործիքներ:

1. քնար (BDB 490) – սա ունի 2-4 լար: Այն մեծ տարածում էր գտել ՀՄԱ-ում: Սա հենց այն գործիքն է, որը նվագում էր Դավիթը Սավուղ թագավորի համար՝ նրան հանգստացնելու (տես՝ 1 Թագ. 16:16):
2. տասլարանի տավիղ (BDB 614 ԿԱՉՄՈՒԹՅԱՄԲ BDB 797): Այն խմբային գործիքների մի մասն էր կազմում, որոնք կիրառվում էին թե՛ աշխարհիկ և թե՛ երկրպագության միջավայրում (տես՝ 1 Թագ. 10:5):

33:3 «նոր երգ» ՀՄԱ-ի ժողովուրդները երգեր էին գրում, որպեսզի կարևորագույն դեպքերի և անձանց հիշատակի համար դրանք մնային (տես՝ Ելից 15, 1 Թագավորաց 22): Այստեղ գործող անձը ՅԱՀՎԵՆ է՝ Արարիչը (տես՝ Սաղմ. 40:3, 96:1, 98:1, 144:9, 149:1, Ես. 42:10, Հայտն. 5:9, 14:3):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 33:6-12
[6]ՏԻՐՈՋ խոսքով ստեղծվեցին երկինքները,
Ու Նրա բերանի շնչով՝ նրանց ամբողջ զորքը:
[7]Ծովի ջրերը հավաքում է մի դեզի պես,
Անդունդները դնում է շտեմարանների մեջ:
[8]Թող ամբողջ երկիրը վախենա՛ ՏԻՐՈՋԻՑ,
Ու Նրանից ակնածեն երկրի բոլոր բնակիչները:
[9]Քանի որ Նա խոսեց ու կատարվեց:
Նա հրամայեց, ու հաստատվեց:
[10]ՏԵՐԸ ոչնչի է հանգեցնում հեթանոսների խորհուրդը,
Ի չիք դարձնում ժողովուրդների ծրագրերը:
[11]ՏԻՐՈՋ խորհուրդը հավիտյան հաստատ է,
Ու Նրա սրտի խոհերը՝ ազգից մինչև ազգ:
[12]Օրհնյալ է այն ազգը, որի Աստվածը ՏԵՐՆ է
Ու այն ժողովուրդը, որին ընտրեց որպես Իր ժառանգություն:

33:6-12 Այս պարբերությունն ունի երկու գլխավոր ճշմարտություն:
1. ՅԱՀՎԵՆ արարիչ է՝ Սաղմ. 33:6-9 (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ)
2. ՅԱՀՎԵՆ ազգերի համար նպատակ ունի՝ Սաղմ. 33:10-12 (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ):

33:6 «ՏԻՐՈՋ խոսքը» Սա անշուշտ արտացոլում է Ծննդոց 1-2 (տես՝ Սաղմոս 104): Հուսով եմ, որ մի պահ ժամանակ կհատկացնեք և կնայեք առցանց իմ բացատրական մեկնաբանությունը Ծննդոց 1-2-ի շուրջ www.freebiblecommentary.org կայքում:

Եբրայական մտածողության մեջ ստեղծագործությունը եղել է ոչնչից (*ex nihilo*) խոսված խոսքի միջոցով (*fiat*, տես՝ Սաղմ. 33:9, Ծննդոց 1, Սաղմ. 148:5, 2 Կորնթ. 4:6, Եբր. 11:3): Աստծո Խոսքը դարձվածք է Աստծո մտքի կամ կամքի համար: Ժամանակակից հավատացյալները վիճում են Ծննդոց 1-2-ի հետ կապված շատ հարցերի շուրջ: Ջոն Ուոլթոնի կողմից գրված մի նոր գիրք, որը կոչվում է *Ծննդոց Մեկի կորած աշխարհը*, օրհնություն է եղել իմ համար, քանի որ ինքս էլ այս խնդիրների հետ բախվել եմ:

❖ **«երկինքները»** Սա վերաբերում է երկրի վրա տարածվող մթնոլորտին: Հնում մարդիկ այն դիտարկում էին որպես պինդ կաշվից տարածվող երկնակամար՝ անձրևի պատուհաններով: Հիշե՛ք, որ Աստվածաշունչը «հակագիտական» չէ, այլ «նախագիտական»: Այն երևույթները նկարագրում է մարդկային հինգ զգայարանների միջոցով, ինչպես որ դրանք կան՝ երևում են (այսինքն՝ ֆենոմենալ լեզուն): Զգուշացե՛ք ժամանակակից արևմտյան տառացիությունից: Աստվածաշունչը հնագույն արևելյան գիրք է: Աստվածաշունչը պետք է առաջին հերթին լինի Աստծո Խոսքը ուղղված իր օրերի համար, այնուհետև՝ մեր օրերի:

Եթե ձեզ հետաքրքրում է Աստվածաշնչի մեկնաբանության ճիշտ սկզբունքների հարցերը, ապա տե՛ս իմ Աստվածաշնչյան Մեկնաբանության Սեմինարը (աուդիո, վիդեո և գրառված տեքստ) www.freebiblecommentary.org

❖ **«նրանց ամբողջ զորքը»** Սա վերաբերում է այս մոլորակի ավարտուն ստեղծագործությանը (տես՝ Ծննդ. 2:1): Հնում մարդիկ երկնային լուսատուներին (արև, լուսին, աստղեր, մոլորակներ, գիսաստղեր) դիտարկում էին որպես երկնակամարի շուրջը պտտվողներ: Դրանք աստվածներ չէին, այլ պարզապես ՅԱՀՎԵԻ գեղեցիկ ֆիզիկական ստեղծագործության մասն էին կազմում: Կարծում եմ Ծննդոց 1 աստվածաբանորեն գործում է որպես Բաբելոնյան աստվածների նսեմացնող գլուխ, ինչպես որ Ելից 7-11-ի պատուհասները գործում են նսեմացնելու Եգիպտական աստվածներին:

33:7 «Ջրերի» թեման ունի մի քանի ասպեկտներ՝

1. Ծննդոցը հատուկ չի նշում, որ Աստված ստեղծեց ջուրը:

ՀՄԱ-ի դիցաբանության մեջ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՄԱ-Ի ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՋՐՀԵՂԵՂԻ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ) աղի ջուրը և քաղցր ջուրը աստվածներ էին: ՅԱՀՎԵՆ հաղթում է նրանց:

Ջուրը դառնում է ՅԱՀՎԵԻ դատաստանի միջոցը և Նոյի հետ նորից աշխարհը սկսելը (տես՝ Ծննդոց 6-9):

Ջուրը ՀՄԱ ժողովուրդների համար կարևոր էր: Նրանք ձևավորել էին պտղաբերության պաշտամունք (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ՀՄԱ-ՈՒՄ) որպես բնության կանոնավոր ցիկլերը երաշխավորելու միջոց (այսինքն՝ անձրևը իր ժամանակին):

❖

NASB, NKJV, NRSV, REB	**«դեզի պես»**
NASB լուսանցք	**«ջրի տիկի մեջ»**
NRSV	**«ինչպես շշի մեջ»**
NJB	**«պատնեշի պես»**
LXX	**«գինու տիկի պես»**
JPSOA	**«թմբի պես»**

MT տալիս է «դեզ» (BDB 622, נד, տես՝ Ելից 15:8, Հեսու 3:13,16, Սաղմ. 78:13): Այն կարծես թե վերաբերում է Ծնն. 1:9-ին: UBS տեքստային նախագիծը (էջ՝ 217) տալիս է "B" գնահատական (այսինքն՝ որոշ չափով կասկածելի):

NASB լուսանցքում, NRSV, LXX վերցնում է մեկ այլ արմատից, BDB 609 (տես՝ Հեսու 9:4,13, Դատ. 4:19, Սաղմ. 56:8, 119:83):

Աքքադական և Ուգարտական մի արմատ կա՝ נכד, որը նշանակում է «սափոր» կամ «շիշ»:

33:8 Տե՛ս Սաղմ. 33:6-ի գրառումը:

33:10-12 Ֆիզիկական ստեղծագործության հետ կապված աստվածաբանական պնդումները այժմ կենտրոնացնում են այդ ստեղծագործության նպատակը, որը Արարչի հետ փոխհարաբերությունն է (տես՝ Ծնն. 1:26, 27, 3:8):

«Ազգերը» (այսինքն՝ հեթանոսները) երկրորդական միտք չեն, այլ ՅԱՀՎԵԻ նպատակն են եղել հենց սկզբից (տես՝ Ծնն. 3:15, 12:3, Ելից 19:5, Սաղմ. 22:27, 66:1-4, 86:8-10, Եսայի 2:2-4, 12:4-5, 25:6-9, 42:6-12, 45:22-23, 49:5-6, 51:4-5, 56:6-8, 60:1-3, 66:23, Միքիա 4:1-4, Մաղ. 1:11, Հովհ. 3:16, 4:42, Գործք 10:34-35, 1 Տիմ. 2:4, Տիտոս 2:11, 2 Պետ. 3:9, 1 Հովհ. 2:2, 4:14):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

33:10 «խորհուրդը» «ՏԻՐՈՋ խորհուրդ (BDB 420, այսինքն՝ նպատակը) հավիտյան է մնում» (տես՝ Հոբ 23:13, Առակ. 19:21): Ամեն:

33:12 Արդյո՞ք Աստված ոմանց է ընտրել փրկության համար, թե բոլորին: Սա Աստծո գերիշխանությունն ի հակադրություն մարդու ազատ կամքի խրթին հարցն է:

ՅԱՀՎԵԻ սերը, ծրագիրը և նպատակները ներառում է, սակայն շատ ավելի ընդարձակ է, քան, Աբրահամի սերունդները: Նա ուզում է, որ բոլորը ճանաչեն Իրեն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԼԱՆՍԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 33:13-17
13ՏԵՐԸ երկնքից նայում է, ու Նա տեսնում է մարդկանց բոլոր որդիներին,
14Իր բնակության վայրից դիտում է աշխարհի բոլոր բնակիչներին:
15Նրանց սրտերը միանման ստեղծեց.
Նկատի է առնում նրանց բոլոր գործերը:
16Ո՛չ մի թագավոր զորքերի բազմությամբ չի փրկվի,
Ո՛չ էլ որևէ հզոր մարդ իր մեծ ուժով կազատվի:
17Փրկվելու համար ձին դատարկ բան է,
Ու իր մեծ ուժով չի կարող ազատել:

33:13-17 Այս պարբերությունը կենտրոնանում է ՅԱՀՎԵԻ ներհատկության վրա (տես՝ Սաղմ.14:2, 102:19): Նա գիտի, թե ինչ է տեղի ունենում երկրի վրա անհատների կյանքում (տես՝ Ելից 3:7-9, Մատթ.6:25-34, 10:30, Ղուկ.21:18, Գործք 27:34, այս նույն նկարագրությունը կարելի է գտնել ՀԿ-յան մի քանի տեքստերում, այսինքն՝ 1 Թագ.14:45, 2 Թագ.14:11, 3 Թագ.1:52): Հավատարիմ հետևորդների կյանքերը չեն վերահսկվում բախտով, հնարավորությամբ, ճակատագրով, այլ առաջնորդվում են հավատքով՝ Աստծո միջոցով: Համարձակ ապրի Նրա համար:

Ուշադրություն դարձրե՛ք, թե քանի անգամ է «բոլորը» (BDB 481) բառը հայտնվում այս Սաղմոսում՝ Սաղմ.33:8ա,բ, 13բ, 14բ, 15ա,բ: ՅԱՀՎԵՆ ստեղծեց և ուշադրություն է դարձնում Իր բոլոր մարդ արարածներին: Կյանքը պարգև է նպատակով: Բոլոր մարդիկ հաշիվ են տալու Աստծուն այս պարգևի իրենց տնտեսության համար:

33:15 ՅԱՀՎԵՆ է ձևում (BDB 427, KB 428, *Qal* ԴԵՐԲԱՑ, տես՝ Ծննդ.2:7, 8, 19) բոլոր մարդկանց և գիտի նրանց կյանքերը (տես՝ Սաղմոս 139): Նա ճիշտ դատավոր է, քանի որ գիտի մեր կամքը, շարժառիթները, գործերը և հետևանքները:

33:16-17 Մարդկային կյանքում իրադարձությունները, պատմությունը պատահական չէ, այլ նպատակաուղղված: ՅԱՀՎԵՆ անգամ գործածում է չարին Իր նպատակների համար: Ոչինչ պատահական չի լինում: Այժմ ճիշտն ասած, սա մի մեղավոր աշխարհ է և այն ինչ տեղի է ունենում ՅԱՀՎԵԻ կամքը չէ: Նա թույլ է տալիս մեր որոշումները պտուղ տան (այսինքն՝ բարի, թե չար): Երկրի վրա ազդել է մարդկության մեղքը (տես՝ Ծննդոց 3, Ես.53:6, Հռոմ.8:18-23): Խորհուրդը այն է, թե ինչպես է՝

1. ՅԱՀՎԵԻ գերիշխանությունը
2. մարդկային որոշումները
3. ֆիզիկական գործունեության ցանցը

Հավատքի աչքերը փնտրում են Աստծուն բոլոր դեպքերում (տես՝ Սաղմ.33:18-22): Ամբարիշտը փնտրում է իշխանություն, հարստություն, չարություններ, աղետներ և իր անձի համար հնարավորություններ: Մարդիկ չպետք է ապավինեն ռազմական ուժի (տես՝ Սաղմոս 2):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 33:18-22
18Ահա ՏԻՐՈՋ աչքը Իրենից վախեցողների վրա է,
Ու նրանց վրա, ովքեր Իր ողորմությանն են հուսացել՝
19Նրանց անձը մահից փրկելու և սովի ժամանակ

Նրանց կենդանի պահելու համար:
[20]Մեր անձը սպասում է ՏԻՐՈՋԸ:
Նա է մեր օգնությունն ու մեր վահանը:
[21]Քանի որ մեր սրտերը Նրանով են ուրախանալու,
Որովհետև Նրա սուրբ անվանը հուսացինք:
[22]Ո՛վ ՏԵՐ, Քո ողորմությունը թող մեզ վրա լինի,
Ինչպես որ մեր հույսը Քո վրա է:

33:18-22 Նկատե՛ք, թե ինչպես է հավատարիմ հետևորդը բնութագրվում:

1. Նրանք, ովքեր վախենում են ՅԱՀՎԵԻՑ, Սաղմ. 33:18
2. նրանք, ովքեր հուսացել են Նրա գթասրտությանը, Սաղմ. 33:18
3. նրանք, ովքեր սպասում են ՅԱՀՎԵԻՆ, Սաղմ. 33:20
4. նրանք, ովքեր տեսնում են Նրան որպես իրենց օգնությունը և վահանը, Սաղմ. 33:20
5. նրանք, ովքեր ցնծում են Նրանով, Սաղմ. 33:21
6. նրանք, ովքեր վստահում են Նրա սուրբ անվանը, Սաղմ. 33:21
7. նրանք, ում հույսը (բառացի՝ «սպասում են») Նա է, Սաղմ. 33:22

ՅԱՀՎԵՆ՝

1. Իր աչքը պահում է նրանց վրա, Սաղմ. 33:13-15
2. ազատում է նրանց (BDB 664, KB 717, *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ)
3. պահում է նրանց (BDB 310, KB 309, *Piel* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ)
4. օգնում է (BDB 740) և պաշտպանում (BDB 171) նրանց

Ուշադրություն դարձրե՛ք Սաղմոսներից շատերի եզրափակմանը, երբ կիրառվում է ՀՈԳՆԱԿԻ թիվ, որպեսզի աղոթքը՝ փառաբանությունը մի հավատարիմ հետևորդից տարածվի բոլոր հավատարիմ-ների վրա:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Թվարկե՛ք Սաղմ. 33:1-3-ում ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ, որոնք կապված են երաժշտական երկրպագության հետ: Ինչո՞ւ է երաժշտությունը երկրպագության այդքան կարևոր մասը կազմում:
2. Ինչպե՞ս է Սաղմ. 33:6-9 արտացոլում Ծննդոց 1-ը:
3. Բացատրե՛ք Սաղմ. 33:11-ը ձեր իսկ խոսքերով:
4. Ինչպե՞ս է Սաղմոս 33:15 արտացոլում Ծնն. 1:26-28-ը:
5. Արդյո՞ք ՅԱՀՎԵՆ ունի «աչք»: